

նաց աղագաւ, ինքնակամ կամ հրաւիրեալ ՚ի Բրնձէն, որպէս ասէն ոմանք, կալեալ եղեւ եւ արգելեալ ՚ի դիպահոջ (1185). յորմէ ոչ կարաց գերծանել՝ բայց ՚ի բաց թողլով զվիճեալ կալուածսն, եւ տալով ՚ի պատանդ զմայր իւր եւ զայլս, այլ եւ փրկանս՝ հազար ոսկի, զորս ետ բերել ՚ի քեռոյն իւրմէ (Բակուրանէ). իսկ զի յառաջ քան զգերութիւնն պաշարեալ էր զԼամբրուն, նա եւ մինչ յարգելանին էր՝ ազդ արար առ Լեւոն՝ պնդել զպաշարումն եւ նեղել զՀեթմեանս: Այս առաջին պատերազմական գործ յիշատակի Լեւոնի, թէ եւ որպէսն անծանօթ. իսկ ոմանք ասէն², յայսմ ժամանակի դարձուցեալ Լեւոնի զգէնսն եւ ՚ի վերայ Բրնձին, եւ ստիպեալ զնա կորակոր դառնալ յետս. բայց յայտնապէս վկայի՝ զի դաշամբք եւ փրկանօք եղեւ ազատութիւն եղբօր իւրոյ:

Ոչ աւելի քան զմի ամ կամ զերկուս բաւեաց Ռուբէն ՚ի կրկնում իշխանութեանն. թուեցաւ ոմանց թէ զգուեալ վասն անարգանաց գերութեանն, եւ կամ վերստին խիթացեալ ՚ի թեկն ածելոյ այնմ՝ եղբօրն, կամակար մտօք մերկացեալ յանձնէ եթող նմա զպարոնութիւնն, եւ ինքն մեկուսացաւ ՚ի կրօնաւորանոցի ուրեք կնքել զկեանսն. եւ իրազգաց գոլով մօտալուտ կատարածին, յանձն արար Լեւոնի զդստերս իւր՝ սնուցանել եւ վիճակեցուցանել ըստ պատշաճի. տալով եւս նմա խրատս զգուշաւորս, որպէս ազդէին նմա փորձ եւ վրիպանք անձին իւրոյ, եւ ակնկալութիւն հանդերձելոցն, յոր ահա երթայր՝ տալ համարս ամենիշխան դատաւորին:

Բ. Պայազատութիւն Լեւոնի

Զօր մահուան եղբօրն, այն է վեցն մայիսի 1187 ամի³, համարելի է սկիզբն իշխանութեան Լեւոնի կամ անուանելոյ *Պարոն Հայոց*. զի այսպէս անուանէին ցայնժամ պայազատք Ռուբինեանց. մինչ այլ ամենայն աւագորեարն եւ իշխանագունք՝ կոչէին Պարոնք առանձինն ինչ վիճակաց կամ բերդից, սոքա յանուն ազգին եւ համօրէն երկրի պետութեանն: Չկայր հաւանօրէն այլ արու օրինաւոր ծնունդ ՚ի զարմից տոհմին, եւ անհակառակ՝ Լեւոնի անկ էր աթոռն, ըստ վաղնջուց ազգային սովորութեան, եւ

² Այսպէս ասէ Ապուլֆարաճ, ըստ լատին թարգմանութեան «Leone contra eum strenue insurgente, Princeps pudefactus rediit».

³ Գոգջիր ՚ի նոյնքանիս ամսոյն (2 մայիսի) եւ վախճանեցաւ, յամի 1219, ապա լի 32 ամ իշխեաց իբրեւ Պարոն եւ իբրեւ Թագաւոր: